Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
փետրվարի 3-ի N 124 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Պետական մրցանակների շնորհման վերաբերյալ առաջարկները, ըստ մրցանակաբաշխության տարվա մարտի 1-ից 15-ը հրապարակված մրցանակաբաշխության հայտարարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ են ներկայացվում ոչ շուտ, քան մինչև մրցանակաբաշխության տարվա նոյեմբերի 1-ը և ոչ ուշ, քան մինչև նոյեմբերի 15-ը՝ բացառությամբ Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի, որի շնորհման համար առաջարկները Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ են ներկայացվում ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի ծննդյան օրվան՝ սեպտեմբերի 18-ին, ընդառաջ:

2. Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի առաջարկը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ է ներկայացվում ոչ շուտ, քան մինչև մրցանակաբաշխության (յուրաքանչյուր զույգ) տարվա հուլիսը 1-ը և ոչ ուշ, քան մինչև հուլիսի 15-ը:

3. Պետական մրցանակի ներկայացվող ստեղծագործությունների հայցերը քննարկող հանձնաժողովը կամ կոմիտեն հայցերը քննարկում է համապատասխան առաջարկությունները՝ հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից սահմանված չափանիշները մրցանակի հավակնորդների ընտրության համար: Հայցերը

քննարկվում են հայցերի ընդունման ժամկետի ավարտից մինչև դրանք առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնելու ժամանակահատվածում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

03.02.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ